

Եւ պարակից քեզ լինելով,  
Եղանակէն զերգս ցնծալով:

Արքայական եղեր ծառայ  
Ամբիժ վարուք իբր զԵղիա,  
10 Զսառնացեալս ի սէր քոյ վառեա  
Եւ զհոգու ցաւս ապաքինեալ:

Քարոզաւ ը բանին եղեր,  
Ըզմնորեալ հաւատս դարձուցեր,  
Ըզգըլորեալսն կանգնեցեր,  
15 Եւ ըզվիրաւորս բըժըշկեցեր:

Արքայութեան ես ժառանգորդ,  
Մուծեա ըզմեզ եւ լեր կըցորդ,  
Դու աղբեր գետաւրէն եւ յորդ,  
Արբուցանող տէր հոգեւորդ:

20 Բամեալ սիրով սիրա իմ ցընծայ,  
Հեռաստանէ առ քեզ խայտեայ,  
Եւ ողջունեալ քեզ համբոյր տայ,  
Սիրով ի սէր քո կապեցալ:

Ի նրաստէ բանքս շողկապ,  
25 Ընդ քեզ սիրով եղէ ի կապ,  
Տիւ եւ գիշեր եմ ես ի տապ,  
Սիրոս յաւժարի տեսլեանդ անխաղ:

Ահայ արեւ մեզ ծագեալ է,  
Զսերն Աստուծոյ ի մեզ վառէ,  
30 Զխաւար մըտացս իմ թաւթափէ,  
Մէջ գիշերի, յառաւառալէ:

9. Եղիայ: — 10. վառեայ: — 17. մուծեայ: —  
22. տա: